ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

—

Բագուից ինժեներ Լևոն Ց. Ղուլեանի նուիրատուութեամբ ուղարկուում են 1904 թ. ընթացքում մի-մի օրինակ «Մուրճ» Մեղենի և Կաղաչինսկի հայ բանտարկեալներին և Թիւրքիայի միքանի տեղեր։

—

«Մուրճ»-ի մաս-մաս վճարող բաժանորդներից միքանիսը կարծել են, որ իրանք վճարելով 5 բուբլի՝ պէտք է ստանան կէս տարի ամսագրիս համարները, այսինքն վեց համար. —մինչդեռ մեր յայտարարութիւնից պարզ է, որ կէս տարուայ «Մուրճ»-ի բաժանորդագինն է 6 բուբլի և ոչ 5 բուբլի, իսկ մաս-մաս վճարող բաժանորդները համարւում են տարեկան բաժանորդներ որոշ պայմաններով։ Արդ, խմբագրութիւնս պատիւ ունի խնդրել, որ այդ բաժանորդները յայտնեն, արդեօք կամենում են լրացնել իրանց վրայ ապառիկ մնացած բաժանորդագինը և ստանալ «Մուրճ»-ի համարները մինչև տարուայ վերջը, թէ ոչ, որպէսզի բացասական պատասխանի դէպքում խմբագրութիւնս այլ ևս չպահի նրանց հասնելիք համարները № 6-ից սկսած։